ԿՈՄԻՏԱՍԻ ԱՐԽԻՎԸ

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի թատերա-երաժշտական բաժնում պահպանվում են բազմաթիվ արժեքավոր արխիվներ, այդ թվում՝ Կոմիտասի, Կարա-Մուրզայի, Տ. Չուխաջյանի, Ալ. Սպենդիարյանի, Ն. Տիգրանյանի, Ռ. Մելիքյանի, Ն. Պապայանի, Հ. Նալբանդյանի արխիվները։

Հարուստ և շատ արժեքավոր է Կոմիտասի արխիվը, որն իր մեջ ամփոփում է երաժշտական ստեղծագործություններ և տեսական նյութեր, նամակներ, փաստաթղթեր, գրություններ, կենսագրական նյութեր, լուսանկարներ, Կոմիտասին նվիրված հուշեր, աշխատություններ և հոդվածներ, մեծ երաժշտագետի գրադարան և այլն։

Երաժշտական ժառանգության մի հարուստ հատված են կազմում (89 միավոր) ազգագրական նյութերը՝ հայ ժողովրդական, հոգևոր, ինչպես նաև այլազգի երգերի ու երգերի տեքստերի գրանցումները. երգերը գրի են առնված հայկական և եվրոպական ձայնանիշներով։

Ստեղծագործությունների պահպանման բաժնում գտնվում են ժողովրդական ու հոգևոր երգերի մշակումներ ձայնի և երաժշտական տարբեր գործիքների համար և ինքնուրույն ստեղծագործություններ, այդ թվում՝ խմբերգներ, միաձայն երգեր, հատվածներ Հովհ. Թումանյանի տեքստով գրված «Անուշ» օպերայից, «Անուշի» գրական տեքստը Կոմիտասի բազմաթիվ նմուշներով, այդ օպերայի բեմադրության և գործողության հրահանգը։ Պահպանվել է Հ. Պարոնյանի «Քաղաքավարության վնասները» կատակերգության համար գրած երաժշտությունը։ Կան նաև դաշնամուրային ստեղծագործություններ, պիեսներ լարային կվարտետի, կվինտետի, սիմֆոնիկ փոքր նվագախմբի համար, ուսանողական շրջանի ռոմանսներ գերմանացի բանաստեղծների տեքստերով, փոխադրություններ Մոցարտի, Վագների, Չայկովսկու ստեղծագործություններից։ Կան Կոմիտասի բանաստեղծությունները՝ տպագիր և անտիպ։

Տեսական աշխատությունները (80 միավոր) ամփոփում են ուսումնասիրություններ հայ գեղջուկ երաժշտության, հայ եկեղեցական երաժշտության, խազաբանության մասին, հայ երաժշտության պատմությանը վերաբերող նյութեր, տարրական երաժշտության և հարմոնիայի դասագրքեր, ձայնագրությանն և պարերի նկարագրին նվիրված ուսումնասիրություններ, գեղագիտությանը վերաբերող նյութեր, նաև թարգմանություններ կատարված Կոմիտասի կողմից։

Կոմիտասի արխիվում կա վաթսուն նամակ, որից 43-ը՝ գրված Կոմիտասի կողմից։

Իր նամակներում Կոմիտասը արծարծում է ստեղծագործական շատ հարցեր. մեր առջև ծառանում է նրա բազմակողմանի գործունեությունը, հետաքրքրությունների չափազանց լայն շրջանը, մեծ հայրենասիրությունն ու նվիրվածությունը հայրենի կուլտուրային։ Նամակները լույս են սփռում նաև նյութական ու բարոյական այն ծանր պայմանների վրա, որոնցում գտնվել է նա երկար տարիներ։

Հետաքրքրություն են ներկայացնում նաև Կոմիտասին վերաբերող փաստաթղթերը, գրությունները, կենսագրական նյութերն ու հիշողությունները կոմպոզիտորի մասին։

Կոմիտասի գրադարանը (549 միավոր) բաղկացած է հայերեն, ռուսերեն, գերմաներեն, հունարեն, ֆրանսերեն գրքերից հարմոնիայի, պոլիֆոնիայի, ձայնամարզության, դաշնամուրային նվագի, գործիքագիտության, կոմպոզիցիայի, խազաբանության, երաժշտական երկի ձևի ու բովանդակության, դիրիժորական ու խմբավարական արվեստի մասին, գրքեր նվիրված երաժշտության պատմությանը, նաև երաժշտական բառարաններ, բազմաթիվ ժուռնալներ, հրատարակված միջազգային երաժշտական ընկերության կողմից։

Մի շարք գրքերի վրա մենք տեսնում ենք Կոմիտասի բազմաթիվ նշումները։

Նոտաների թվումն են հայտնի օպերաների կլավիրներ, տարբեր ժողովուրդների ժողովրդական երգերի ժողովածուներ։

Արխիվում կա 142 լուսանկար, որոնցից մի մասը խմբանկարներ են։ Որոշ լուսանկարներ պատկերում են Կոմիտասին հայտնի երգիչներ՝ Բ. Ամիրջանի, Ա. Շահմուրադյանի, Վ. Տեր-Առաքելյանի, ջութակահար Դ. Դավթյանի, կոմպոզիտոր Ս. Մելիքյանի, ականավոր գիտնական Հ. Մանանդյանի հետ։

Այլ անձանց լուսանկարներից պետք է նշել դերասանուհի Սիրանույշի նկարը հետևյալ մակագրությամբ — «Գերապատիվ Հայր Կոմիտասին անչափ գեղեցիկ և թանկագին հիշատակի փոխարեն խորին հարգանք. Սիրանույշ. 1 մարտի, 1909, Բաքու»։

Արխիվում պահպանվում են Կոմիտասի երաժշտական գործիքները՝ 7 բլուլ, մեկը՝ փորագրված Կոմիտասի կողմից։

Կոմիտասի արխիվի բազմաթիվ նյութերը ստացվել են արտասահմանից. Մ. Բաբայանից (Փարիզ), Թ. Ազատյանից (Պոլիս), Գարեգին Հովսեփյանից (Անթիլիաս)։

Կոմիտասի արխիվը, որ բաղկացած է 1307 միավորից, ամբողջությամբ մշակված է։

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ